

ՍԱՂՄՈՍ 93

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԻՐՈՋ վեհափառությունը	ՏԻՐՈՋ հավիտենական թագավորությունը	Աստծուն որպես Թագավոր մեծարող օրհներգ	Աստված Թագավորը	Աստծո մեծությունը
<u>MT ներածությունը</u> <u>ՃԿԱ</u>				
93:1-2	93:1-2	93:1-2	93:1-2	93:1 93:2
93:3-5	93:3-4	93:3-4	93:3-4	93:3 93:4
	93:5	93:5	93:5	93:4

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 93:1-2
¹ՏԵՐԸ թագավորում է, վեհափառություն է հազել, ՏԵՐԸ գորություն է հազել ու գոտևորվել է.
Աշխարհն էլ հաստատել է, որ չսասանվի:
²Քո գահը հնուց է հաստատված. Դու հավիտենից ես:

93:1-2 Այս պարբերությունը նկարագրում է ՅԱՀՎԵԻՆ որպես ստեղծագործության վրա տիրող Թագավոր (տես՝ Սաղմ. 47:2, 96:10, 97:1, 99:1): Սաղմ. 93:1-ի առաջին չորս ԲԱՅԵՐԸ ՎԱՂԱԿԱՍԱՐՆԵՐ են, որոնք ցույց են տալիս ավարտված գործողություն:

1. թագավորում է – BDB 573, KB 590, *Qal* ՎԱՂԱԿԱՍԱՐ, տես՝ Սաղմ. 96:10, 97:1, 99:1
2. հազել է – BDB 527, KB 519, *Qal* ՎԱՂԱԿԱՍԱՐ (երկու անգամ)

3. գոտևորել է – BDB 25, KB 25, *Hithpael* ՎԱՂԱԿԱՏԱՐ, նկատեք, որ Նա գոտևորել է Իրեն, որը ցույց է տալիս ՅԱՀՎԵԻ ինքնիշխանությունը, տես՝ Սաղմ. 65:6:

Չարմանալի է, որ Սաղմ. 93:1-ի հաջորդ երկու ԲԱՅԵՐԸ, որոնք պատմում են, որ Նրա աշխարհը հաստատված է (տես՝ 93:2, *Niphal*, Սաղմ. 96:10) և որ չի սասանվելու, երկուսն էլ ԱՆԿԱՏԱՐ են, որոնք ցույց են տալիս շարունակական գործողություն (տես՝ 1 Կորնթ. 16:30): Այս համատեքստում ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐԸ կարող են մատնանշել անցյալ ժամանակ, իսկ ԱՆԿԱՏԱՐՆԵՐԸ՝ ընթացիկ ապագա ժամանակ, սակայն սահմանափակված այս դարաշրջանով:

93:1 Ուշադրություն դարձրե՛ք, որ այս ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅԵՐԸ խոսում են ՅԱՀՎԵԻ արքայական հանդերձի մասին: Նրա հանդերձը փոխաբերորեն հաստատում է Նրա բնավորությունը և իշխանությունը:

1. վեհափառություն է հագել (BDB 145)
2. գորություն է հագել (BDB 738)

Սաղմոս 104:1 հայտարարում է, որ Նա «վեհափառություն» (BDB 217) է հագել և «մեծություն» (BDB 214): Սաղմ. 65:6 հայտարարում է, որ Նա գոտեպնդված է «գորությամբ» (BDB 150):

93:2 Հավիտենական ՅԱՀՎԵԻ հավիտենական թագավորությունը (տես՝ Սաղմ. 93:5գ, 45:6, 90:2) ապահով է (տես՝ Սաղմ. 10:16, 29:10, 46:10, 52:7): Հնարավոր է հանգամանքները թվան ծայրաստիճան, սակայն դրանք միայն ժամանակավոր են: Մեր Աստվածն է տիրում (տես՝ Դան. 2:44, 7:14, 27, Դուկ. 1:33, Հայտն. 11:15, 17, 19:6):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 93:3-5

³Հեղեղները բարձրացրին, ո՛վ ՏԵՐ,
Հեղեղները բարձրացրին իրենց ձայնը.
Հեղեղները բարձրացնում են իրենց ալիքները:
⁴Շատ ջրերի ձայնից ու ծովի հզոր ալիքներից
Ավելի հզոր է ՏԵՐԸ բարձունքներում:
⁵Քո վկայությունները շատ վստահելի են:
Սրբությունը վայել է Քո տանը, ՏԵՐ, երկա՛ր օրեր:

93:3-4 NASB տարբերակն այս Սաղմոսը բաժանում է երկու պարբերության՝ 93:1-2 և 93:3-5, սակայն բոլոր մյուս անգլերեն թարգմանությունները, որոնք ես օգտագործում եմ համեմատելու պարբերությունների բաժանումները (NKJV, NRSV, TEV, NJB) տալիս են Սաղմ. 93:5 որպես առանձին ամփոփիչ հայտարարություն:

Սաղմոս 93:3-4 խոսում է ՅԱՀՎԵԻ ստեղծագործության և ջրերի վրա քառսի վերահսկողության մասին (տես՝ Սաղմ. 74:12-17, 89:9-10, Եսայի 51:9): Ինչպես որ Սաղմ. 93:1 ունի հակադրում ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐԻ և ԱՆԿԱՏԱՐՆԵՐԻ միջև, որոնք ցույց են տալիս այս դարաշրջանում տեղի ունեցող անցյալ և ներկա-ապառնի գործողություններ (տես՝ Չաք. 14:9), այնպես էլ Սաղմ. 93:3-ն է: Սաղմ. 93:4-ում չկան ԲԱՅԵՐ, սակայն այն նույնպես անդրադառնում է ՅԱՀՎԵԻՆ որպես տիեզերքի հավիտենական, հաղթանակած Թագավոր:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՋՐԵՐ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԼԵՎԻԱԹԱՆ

93:3 Բացման ԳՈՅԱԿԱՆԸ և ԲԱՅԸ (BDB 12) կիրառվում են երեք անգամ, պոեզիայի յուրաքանչյուր տողում մեկ անգամ: Հնարավոր է այս համարն արտացոլում է բանաստեղծական մի տող՝ կիրառված *Pauhaui* համար, որը գտնվել է Ռաս Շամրայի տեքստերում (այսինքն՝ Ուգարտական): Եբրայերեն լեզուն հաճախ վերցնում էր իրենց հարևան զավթիչների կրոնական նկարագրությունը և վերագրում այն ՅԱՀՎԵԻՆ՝ միակ ճշմարիտ Աստծուն:

93:4 «հզոր» Ածականը (BDB 12) կիրառվում է նկարագրելու այեկոծություն (այսինքն՝ Աստծո թշնամիները ստեղծագործության և ժամանակի ընթացքում՝ ինչպես օրինակ Եգիպտոսը, Բաբելոնը), սակայն ՅԱՀՎԵՆ ավելի բարձր է, ավելի մեծ է, ավելի հզոր է, քան բոլոր թշնամիները (սկզբնական, ժամանակավոր, և էսկատոլոգիական):

93:5 «վկայություններ» Այս տերմինը (BDB 730 III) արտացոլում է ՅԱՀՎԵՒ հայտնությունը: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՂ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐ: ՅԱՀՎԵՆ՝

1. Իրեն կարգել է որպես հավիտենական Թագավոր
2. քառասյին ջրերին հաղթել է
3. կատարելապես հայտնել է Իրեն (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՂ ԲԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ)
4. կատարելապես հայտնել է Իր նպատակները (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵՒ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ)

❖ **«Սրբությունը վայել է Քո տանը»** «Սրբություն» բառի համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲ: AB, հատոր 17, Միթչել Դահուղ (նաև տես՝ NIDOTTE, հատոր 3, #2, էջ՝ 2) դիտարկում է «սուրբ» բառը որպես երկնային խորհրդի հրեշտակների համար տիտղոս (տես՝ Սաղմ.29:1), այդպիսով դարձնում տողը հետևյալ ընթերցմամբ՝

«Քո տանարում Քո սրբերը Քեզ կգովաբանեն» (էջ՝ 339, 343):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԵՐԿՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

❖ «Վայել» ԲԱՅԸ կարելի է երկու կերպ վերլուծել՝

1. ԲԱՅ – BDB 610, KB 659, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ (ՀԿ-ի վերլուծական ուղեցույց Բիլի, Բենքզի և Սմիթի կողմից, էջ՝ 449):
2. ՄԱԿԲԱՅ – BDB 610 (ՀԿ-ի վերլուծության առանցքը, Օուենսի կողմից, էջ՝ 425):

«Տունը» վերաբերում է անապատի Խորանին և հետագայում Երուսաղեմում գտնվող տաճարին:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք այս Սաղմոսը նկատի ունի սկզբնական ստեղծագործությունը, թե՞ Ելիցը:
2. Ինչպե՞ս է այս Սաղմոսը կապված ՀՄԱ-ի հետևյալ թեմաների հետ՝
ա. ջրի քառս
բ. Աստված որպես երկնային Պատերազմող
3. Ի՞նչ նկատի ունի «վկայություններ» խոսքը: